


Գործնական խորհուրդներ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻՆ, ՈՎՔԵՐ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄ ԵՆ ՏԵՍՈՂՈՒԹՅԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ

© Հ. Աղամյան



Չտեսնող կամ տեսողության խանգարումներ ունեցող երեխաները, ինչպես և բոլորը, ԿԱՐՈՂ ԵՆ ՍՈՎՈՐԵԼ, իսկ դասավանդել նրանց նշանակում է՝ **օգնել նրանց հասնել իրենց ամենամեծ ներուժին:**

Շնորհակալություն Ձեզ այս մեծ մարտահրավերն ընդունելու պատրաստակամության համար:



1 ԴԱՍԱՐԱՆ

Անհրաժեշտ է ունենալ լավ կազմակերպված դասարան, որը զերծ է տեսողական և ֆիզիկական խառնաշփոթությունից: Խուսափեք ավելորդ կահույքից, նյութերից և սարքավորումներից, բայց մի գնացեք ծայրահեղությունների: Դասավորեք կահույքն այնպես, որպեսզի տեսողության խանգարումներ ունեցող սովորողը կարողանա հանգիստ տեղաշարժվել դասարանում: Դասարանում եղած նյութերը թողեք իրենց տեղերում: Սա կհեշտացնի տեսողության խանգարումներ ունեցող սովորողի համար անհրաժեշտ նյութերը գտնելու գործընթացը: Սև գրատախտակին գրելիս օգտագործեք սպիտակ կավիճ և համարձակ գծեր կամ, եթե օգտագործում եք whiteboard, ճիշտ կլինեն սև կամ մուգ գույնի մարկերները: Նաև համոզվեք, որ այն, ինչ գրում եք գրատախտակի վրա ուղեկցում եք բանավոր խոսքով, բացառությամբ: Նյութը տպագիր ներկայացնելիս օգտագործեք հեշտ ընթերցվող տառատեսակ՝ առանց ավելորդ ձևավորումների (օրինակ՝ Arial տառատեսակը) և 16 կամ ավելի մեծ տառաչափ՝ կախված երեխայի խնդրից: Բառերի շեշտադրման համար օգտագործեք **bold** ռեժիմը: Խուսափեք *Italic* կամ Underline տարբերակներն օգտագործելուց:

2 ՃԻՇՏ ՆՍՏԵԼԸ ՇԱՏ ԿԱՐԵՎՈՐ Է

Կարևոր է հասկանալ, թե որտեղ է գտնվում սովորողի համար լավագույն տեսողական դաշտը և որն է նրա համար իդեալական դիրքը դասարանում: Օրինակ, եթե սովորողը օգտագործում է միայն ձախ աչքը, ապա կարևոր է, որ նա նստի դասարանի աջ կողմում, պատուհաններից հեռու: Իդեալական տարբերակն այն է, որ լույսը ընկնի նրա վերևից կամ մի փոքր հետնամասից: Եթե սովորողը օգտագործում է էլեկտրական խոշորացույց կամ այլ էլեկտրական սարքեր, ապա կարևոր է, որ նա նստի վարդակի մոտ: Սովորողը պետք է նստի այնտեղ, որտեղից նա կարող է ավելի պարզ տեսնել գրատախտակը և ավելի լավ լսել ուսուցչի բանավոր հրահանգները (ճշտել հենց երեխայից): Նստեցրեք տեսողության խանգարումներ ունեցող սովորողին այլ սովորողների հետ, ովքեր կարող են աջակցել կամ օգնել նրան:

3 ԸՆԿԵՐԸ՝ ՈՒՂԵԿԻՑ

Տեսողության խանգարումներ ունեցող սովորողի դասընկերները կարող են ուղեկցել իրենց ընկերոջը դպրոցի ներսում կամ դպրոցից դուրս: Տեսողության խնդիր ունեցող երեխային ուղեկցելիս պետք է քայլել նրա կողքով՝ նրանից կես քայլ առաջ, որպեսզի չհրի և վտանգի չենթարկի նրան: Ավելի ճիշտ կլինի թույլ տալ, որ նա բռնի իրեն ուղեկցողի ձեռքը, եթե նրան օգնություն է պետք:

4 ԴԻՄԵԲ ԱՆՈՒՆՆԵՐՈՎ

Դիմելով տեսողության խանգարումներ ունեցող երեխային՝ ասեք նրա անունը: Այդ կերպ նրանք կիմանան, որ Դուք նրանց հետ եք խոսում, այլ ոչ թե մեկ ուրիշի: Միջանցքով անցնելիս՝ «Ողջո՛ւյն» ասելով՝ ասեք նաև Ձեր անունը, քանի որ տեսողության խնդիրներ ունեցողները գուցե չկարողանան ճանաչել դեմքերը: Օրինակ՝ «Ողջո՛ւյն, Նարե, տիկին Ավետյանն է, այսօր ինչպե՞ս ես:»: Հորդորեք դասընկերներին վարվել նույն կերպ:

5 ԱՄԵՆ ԻՆՉ ԴԱՐՁՐԵՔ ԲԱՆԱՎՈՐ

Խուսափեք ուղղություններ ցույց տվող ժեստերից, քանի որ տեսողության խանգարումներ ունեցող սովորողները չեն կարող տեսնել այն, ինչ Դուք մատնանշում եք: Խուսափեք «այստեղ», «այնտեղ», «նրա նման», բառերից և նման արտահայտություններից: Օգտագործեք տեղը և ուղղությունը ցույց տվող բառեր, ինչպես օրինակ՝ «վերևից», «ներքևից», «առջևից», «հետևից», «աջից», «ձախից» և այլն:

6 ՇՆՈՐՀԱՎԱԼՈՒԹՅՈՒՆ

Սա աշխատանք է միայն նվիրյալների համար: Մենք շնորհակալություն ենք հայտնում Ձեր աջակցության և լրացուցիչ աշխատանքի համար: